ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հունվարի 26-30-ը Իռլանդիայի Հանրապետություն (ք. Դուբլին) գործուղման արդյունքների մասին

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ.

Կարինե Դադյան- ՀՀ ԿԳՄՄՆ մասնագիտական կրթության և ուսուցման վարչության լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի պետ

Ռեգինա Առաքելյան-ՀՀ ԿԳՄՄՆ մասնագիտական կրթության և ուսուցման վարչության լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի գլխավոր մասնագետ

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.

Իռլանդիայի Հանրապետություն, ք. Դուբլին, 26-30 հունվար, 2026թ.

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ.

Եվրոպական ուսումնական հիմնադրամ (ETF)

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)

Իռլանդիայի Հանրապետության ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման համակարգի ներկայացում, որն ընդգրկում էր և՛ համակարգված մոտեցումները, և՛ վավերացման գործնական իրականացումը:

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ.

- Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման իրագործման հիմնական մեխանիզմները:

- Մասնագիտությունների (որակավորումների) շրջանակները, որոնց համար իրականացվում է ճանաչման գործընթացը:

- Նախընթաց գիտելիքների ճանաչման համակարգի ստեղծման և արդյունավետ կառավարման մեխանիզմները:

- Ճանաչման գործընթացն իրականացնող կառույցները:

- Ճանաչման համակարգերի զարգացման հիմնական տեսլականը:

- Հիմնական մարտահրավերները ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման գործընթացն իրականացնելիս:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ.

«Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման համակարգերի զարգացում» թեմայով խորհրդակցական հանդիպմանը մասնակցում էին նաև Ղազախստանի, Ալբանիայի, Մոլդովայի, Վրաստանի, Սերբիայի, Թուրքիայի, Մարոկկոյի, Թունիսի, Բոսնիա և Հերցեգովինայի, Հյուսիսային Մակեդոնիայի և Կոսովոյի պետությունների ներկայացուցիչները:

Միջոցառման ընթացքում մեր կողմից ներկայացվեց նորմատիվ փաստաթղթերը, որոնց հիման վրա նախատեսվում է իրականացնել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում: Շեշտադրվեց մեր պատրաստակամությունը հետևելու մեր գործընկերների և հատկապես Իռլանդիայում ներդրված հաջողված մոդելի կիրառության օրինակներին:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ.

Միջոցառման ընթացքում որոշում է ընդունվել շարունակել ոչ ֆորմալ կրթության ոլորտում բազմակողմ համագործակցության հետագա զարգացումը միջոցառմանը մասնակից պետությունների պատվիրակների միջև:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Միջոցառման ընթացքում, մասնակից պետությունների ներկայացուցիչները պայմանավորվածություն են ձեռք բերել աշխատանքային կարգով տեղեկատվության մշտական փոխանակման՝ հաղորդակից լինելով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման արդյունավետ համակարգեր ներդրած երկրների ոչ ֆորմալ կրթության ոլորտի փորձագետների նորարարական մոտեցումներին և զարգացումներին:

03.02.2026

ՀՀ ԿԳՄՄՆ մասնագիտական կրթության և ուսուցման վարչության լրացուցիչ և շարունակական **կրթության բաժնի պետ** **Կարինե Դադյան**

ՀՀ ԿԳՄՄՆ մասնագիտական կրթության և ուսուցման վարչության լրացուցիչ և շարունակական **կրթության բաժնի գլխավոր մասնագետ** **Ռեգինա Առաքելյան**